

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Լիլիթ Սարգսյան

Երևանի պետական համալսարան

Փոխաբերությունը՝ որպես մտածողության լեզվաճանաչողական մոդել, թույլ է տալիս իրականության այս կամ այն օբյեկտը ներկայացնել մեկ ուրիշ օբյեկտի միջոցով որևէ ընդհանուր հասկանիչի կամ սուբյեկտիվ վերագրման հիման վրա, ինչի շնորհիվ օժտված է իմաստաբանական մակարդակում տեղեկատվության խտացման ներուժով: Մասամբ սա է պատճառը, որ այն հաճախ հանդես է գալիս գիտական խոսույթում որպես լեզվական տնտեսման միջոց՝ նշված հիմնական գործառույթին զուգահեռ իրականացնելով նաև այլ գործառույթներ՝ պայմանավորված կոնկրետ հաղորդակցական իրադրության գործաբանական նպատակներով:

Բանալի բառեր. փոխաբերություն, լեզվաճանաչողական մոդել, խտացում, լեզվական տնտեսում, գիտական խոսույթ, ներակայում, իմաստաբանական մակարդակ, արտալեզվական գիտելիք:

Ներածություն

Փոխաբերությունը հաճախ դիտարկվում է որպես բանաստեղծական և հռետորական խոսքին բնորոշ ոճական հնար: Ավելին՝ ընդունված է կարծել, որ փոխաբերությունը բացառապես լեզվական երևույթ է, այսինքն՝ այն վերաբերում է լեզվական միավորների ոլորտին, այլ ոչ թե մտածողությանը: Այս դասական մոտեցման իրավացիության հերքմամբ հանդես եկան Ջ.Լակոֆը և Մ.Ջոնսոնը իրենց հեղինակած “Metaphors We Live By” աշխատությամբ, որով առաջ քաշեցին և հիմնավորեցին այն տեսակետը, որ փոխաբերությունը կազմում է մեր առօրյայի անբաժան մասը՝ դրսևորվելով ոչ միայն լեզվում, այլև մեր մտածողության և գործունեության մեջ: Այլ կերպ ասած՝ մեր առօրյակենցաղային հասկացութային համակարգը, որի շրջանակներում մենք մտածում և գործում ենք, իր բնույթով հիմնված է փոխաբերության վրա (Lakoff, Johnson 1980): Սա նշանակում է, որ մարդու ոչ միայն խոսքը, այլև (առաջին հերթին) մտածողական գործընթացները «փոխաբերական» են, այսինքն՝ փոխաբերությունների գոյությունը հնարավոր է խոսքում այն պարզ պատճառով, որ դրանք նախ և առաջ գոյություն ունեն մարդու հասկացութային համակար-

գում: Հետևաբար Ջ. Լակոֆն ու Մ. Ջոնսոնն առաջարկում են փոխաբերությունները դիտարկել որպես փոխաբերական հասկացույթներ (Лаккофф, Джонсон 1990:390): Այսպիսով՝ մեր խնդիրն է երևան հանել այն լեզվամտածողական մեխանիզմները, որոնց միջոցով հասցեագրողի հասկացութային համակարգում տեղի է ունենում իրականության երևույթների, առարկաների և դրանց միջև առկա հարաբերությունների արտացոլումը ամբողջական պատկերների տեսքով, որոնք փոխաբերական հասկացույթներ են: Բացի այդ, անհրաժեշտ ենք համարում ցույց տալ, թե ինչպես են այդ պատկերները վերարտադրվում խոսքի միջոցով՝ ստանալով լեզվական արտահայտություն փոխաբերությունների տեսքով, որոնք տվյալ դեպքում հանդես են գալիս որպես լեզվական տնտեսման միջոց իմաստաբանական մակարդակում: Հավասարապես կարևոր է նաև այն գործոնների բացահայտումը, որոնք թույլ են տալիս խոսքի հասցեատիրոջը համարժեք կերպով ընկալել փոխաբերությամբ հաղորդվող տեղեկատվությունը: Այլ կերպ ասած՝ սույն հոդվածի շրջանակներում բացահայտելու ենք փոխաբերության՝ որպես իմաստի խտացման մեխանիզմի գործառույթները անգլերեն գիտական խոսքում լեզվական տնտեսման լույսի ներքո՝ հիմնվելով փոխաբերության ճանաչողական տեսության դրույթների վրա:

Փոխաբերությունը՝ որպես իմաստի խտացման լեզվաճանաչողական մոդել

Փոխաբերության ճանաչողական տեսության համաձայն՝ մարդու գիտակցության մեջ հասկացույթների խմբերի միջև գոյություն ունեն խորքային կառուցվածքային հարաբերություններ, որոնք թույլ են տալիս այս կամ այն հասկացույթն ընկալել մեկ ուրիշ հասկացույթի միջոցով (Крыкова 2000:6): Փոխաբերությունը նշված խորքային հարաբերությունների իրացման արդյունք է, կամ, որ նույնն է, փոխաբերությունը «մեր հասկացութային համակարգի գլխավոր միջոցն է, որի օգնությամբ մենք օբյեկտների մի խումբն ընկալում ենք օբյեկտների մեկ ուրիշ խմբի միջոցով» (Ченки 1996:70): Այլ կերպ ասած՝ փոխաբերության ընկալումը մի գործընթաց է, որի ժամանակ խոսքի հասցեատերը նոր տեղեկատվությունը համադրում է իր հիշողության մեջ ամրակայված արդեն իսկ հայտնի, հին տեղեկատվության հետ, ինչի հետևանքով ուղեղում տեղի է ունենում նախկին ազդակների՝ հիշողության մեջ պահպանվող հետքերի և դրսից եկող նոր ազդակների փոխազդեցություն: Նման փոխազդեցության արդյունքում էլ ձևավորվում է *որակապես տարբեր, նոր կառույց, որի ներսում տեղի է ունենում տարբեր իրողությունների միաձուլում կամ սինթեզ, որն էլ պայմանավորում է իմաստային խտացման մեխանիզմի գործառույթունը:*

Հարց է առաջանում. ինչի՞ հիման վրա է տեղի ունենում նոր և հին տեղեկատվության համադրումը: Ինչպես արդեն նշել ենք, մտածողության գործընթացն իր բնույթով փոխաբերական է, և այսպես կոչված «փոխաբերականացման» հիմքում ընկած է համաբանությունը՝ որպես չգիտակցվող ընդհանրացում՝ տրամաբանական «գործողություն, որը թույլ է տալիս մի առարկայի բնորոշ առանձնահատկությունները փոխադրել մեկ ուրիշ առարկայի վրա այդ առարկաների միջև առկա որոշակի ընդհանրության հիման վրա» (Суровцев, Сыров 1999:23): Այս կապակցությամբ, սակայն, հարկ է նշել, որ փոխաբերությունը, հիմնված լինելով համաբանության վրա, կարող է առաջանալ նաև տարբեր առարկաների միջև բացահայտ ընդհանրության բացակայության պայմաններում: Հետևաբար փոխաբերությունը հաճախ իրացվում է ոչ թե տարբեր առարկաների օբյեկտիվորեն ընդհանուր հատկանիշների համեմատության կամ համադրման, այլ տվյալ առարկային վերջինիս ոչ բնորոշ՝ մեկ այլ առարկայի այս կամ այն հատկանիշի սուբյեկտիվ վերագրման հիման վրա: Այսպիսով՝ փոխաբերության իրացման գործընթացում, ի տարբերություն օբյեկտիվ միավորող հատկանիշի վրա հիմնված համեմատության, գործի են դրվում ոչ միայն ռացիոնալ ընդհանրության հայտնաբերմանը միտված, այլև նախ և առաջ ոչ օրինաչափ, ոչ ավանդական բնույթի համաբանության բացահայտմանն ուղղված մտավոր գործընթացները, որոնք ներառում են հաղորդակցության մասնակիցների ինչպես ռացիոնալ մտածողությունը, այնպես էլ փոխաբերությամբ ներկայացված իրականության ամբողջական պատկերի զգայական ընկալումը և վերապրումը հաղորդակցվողների կողմից: Սրա արդյունքում ձևավորվում է այսպես կոչված «խտացված» նոր հասկացույթ, որը, ստանալով լեզվական արտահայտություն, խոսքում իրացվում է որպես համալիր «խտացված» իմաստային ամբողջություն:

Հետևաբար, հաշվի առնելով վերոգրյալը, մենք նպատակահարմար ենք գտնում փոխաբերությունը դիտարկել որպես *էներգիայի, տեղեկատվության և նյութի (ինչյուններով կամ գրային նշաններով ներկայացված լեզվական միավորի) եռամիասնություն կամ խտացում, որը հանդես է գալիս որպես փոխաբերության բնորոշ առանձնահատկություն*: Ընդ որում, փոխաբերության ներսում տեղի է ունենում երկու տեսակի՝ համամարդկային և անհատական էներգիաների համատեղում կամ խտացում, այսինքն՝ փոխաբերության դեպքում համամարդկային բանականության էներգիան հանդես է գալիս քարացած ավանդական ձևի (այսինքն՝ ուղիղ, բառարանային իմաստներով հանդես եկող լեզվական միավորների), մինչդեռ անհատական էներգիան՝ այդ ձևը լցնող ոչ ավանդական, հաճախ նաև հուզական բովանդակության (այսինքն՝ կոնկրետ հաղորդակցական ակտի շրջանակներում այդ լեզվական միավորների յուրահատուկ համադրման արդյունքում ի հայտ եկած նոր ամբողջական, խտաց-

ված իմաստի) տեսքով, որոնց հակադրամիասնության շնորհիվ տեղի է ունենում նոր տեղեկատվության հաղորդումը և համարժեք ընկալումը, ինչպես նաև ամբողջանում՝ իմաստային խտացման մեխանիզմի աշխատանքը:

Փոխաբերության՝ որպես լեզվական տնտեսման միջոցի գործառույթները անգլերեն գիտական խոսքում

Գիտական հաղորդակցության ոլորտում փոխաբերության դերի մեկնաբանության հարցում գոյություն ունի երկու հիմնական մոտեցում, որոնք մենք դիտարկում ենք որպես փոխլրացնող: Համաձայն առավել տարածված մոտեցման՝ փոխաբերությունը հանդես է գալիս որպես իրականության ներկայացման այլընտրանքային, պատկերավոր միջոց, որը գեղագիտական առումով յուրահատուկ ոճ է հաղորդում շարադրանքին և հուզական առումով ներագրում խոսքի հասցեատիրոջ վրա: Երկրորդ՝ փոխաբերության ճանաչողական տեսության դրույթների վրա հիմնված մոտեցումը **փոխաբերությունը համարում է գիտական գործունեության հիմնական սկզբունք**, գիտական մտածողության հիմքում ընկած հիմնական մեխանիզմ (Мишанкина 2010:23): Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ փոխաբերությունն իր կառուցվածքում խտացնում, սեղմում է հին և նոր տեղեկատվությունը կամ, որ նույնն է, հնարավոր է դարձնում այս կամ այն իրողության ընկալումը մեկ ուրիշ իրողության մասին գիտելիքների հաշվին: Մյուս կողմից՝ փոխաբերության գործածությունը գիտական խոսույթում թելադրված է նաև գիտական ոճի առանձնահատկություններով, մասնավորապես, մի կողմից, շարադրանքի ձևի սեղմության, հակիրճության, մյուս կողմից՝ բովանդակության ընդգրկունության պահանջներով: Ինչպես գիտենք, փոխաբերությունը, հանդես գալով որպես իմաստաբանական մակարդակում տեղեկատվության խտացման կամ, որ նույնն է, սակավաթիվ լեզվական միավորներով իրականության ամբողջական և ընդգրկուն պատկերի ներկայացման միջոց, միաժամանակ բավարարում է նշված երկու պահանջներն էլ: Հետևաբար մեր ուշադրության կենտրոնում է ճանաչողական փոխաբերության *անհատական-հեղինակային* տեսակը՝ որպես մի օբյեկտի ճանաչումը մեկ ուրիշի միջոցով հնարավոր դարձնող հմար: Նման գործառույթը առավելապես ծառայում է գիտական հաղորդակցության նպատակներին: Այսպես՝ ինչպես ցույց է տալիս հետևյալ օրինակների վերլուծությունը, ներկայացվող գիտական նյութի մատչելիությունն ապահովելու նպատակով խոսքը հասցեագրողը փորձում է փոխաբերության միջոցով խոսքի հասցեատիրոջ համար նոր, անհայտ գիտական երևույթը նկարագրել, բացատրել կամ մեկնաբանել խոսքի հասցեատիրոջը ծանոթ՝ ոչ գիտական աշխարհի տարբեր ոլորտների երևույթների հետ համեմատության միջոցով.

*One of the most important consequences of Einstein's general theory of relativity was the discovery that the universe began as a rapid expansion of space and time 13.8 billion years ago, the Big Bang. Now, according to early versions of the Big Bang theory, the universe has been expanding ever since **with gravity gradually putting the brakes on that expansion.***

(H. Cliff "Have We Reached the End of Physics?" p. 37)

Այս օրինակում հեղինակը, ներկայացնելով տիեզերքի առաջացման տեսությունը, ձգողականության ուժի հակազդեցությունը տիեզերքի ընդարձակմանը համեմատում է այն ուժի ազդեցության հետ, որն աստիճանաբար արգելակելու դեպքում դադարի վիճակի է բերում ավտոմեքենան: Առօրյա կյանքից բոլորիս հայտնի այս պարզ գործողության՝ ավտոմեքենայի արգելակման պատկերի միջոցով հեղինակն իր ունկնդիրներին շատ ավելի պարզ ու մատչելի կերպով է մատուցում այս երևույթի մեկնաբանությունը, քան դա հնարավոր կլիներ ֆիզիկայի բարդ տերմինաբանության միջոցով:

*There are seven Chakras that are located along the central channel or spine from the base of the spine to the top of the head...
"The body is a vehicle of consciousness, Chakras are the wheels that carry this vehicle through its trials and transformations," says Anodea Judith.*

(S.S. Arora "The 'Chakras' Science and Its Application to Coaching" p.15)

Տվյալ օրինակում հոդվածի հեղինակը, փորձելով բացատրել մարդու մարմնի և հոգու կենսագործունեության համար պատասխանատու էներգետիկ կենտրոնների՝ չակրաների դերը և գործունեության հիմնական մեխանիզմը, համապատասխան լեզվական միավորների՝ բառերի ընտրության և համադրման հաշվին ընթերցողի մոտ խթանում է ավտոմեքենայի պատկերի ընկալում, որը խորհրդանշում է մարդու մարմինը, որը կրում է մարդու գիտակցությունը, կամ որում գտնվում է հոգին: Իսկ չակրաները այդ ավտոմեքենայի անիվներն են, այսինքն՝ մարմնի «շարժը» կամ, որ նույնն է, գործունեությունն ապահովում են անիվի պես պտտվող էներգիայի կուտակումները մարմնի համապատասխան հատվածներում՝ մարմնով անցնող էներգիայի հոսքի կենտրոնական ուղու՝ ողնաշարի երկայնքով: Ընթերցողին մնում է ավտոմեքենաների մասին իր տարրական արտալեզվական գիտելիքների հաշվին վերծանել նաև հաղորդվող տեղեկատվության՝ փոխաբերության միջոցով ներակայված

հատվածը, այն է՝ եթե ավտոմեքենայի անիվներից որևէ մեկը խափանվի, կամ դրանց հավասարակշռությունը խախտվի, ավտոմեքենան չի կարող ծառայել իր նպատակին: Ճիշտ նույն կերպ մարդու մարմինը էներգետիկ կենտրոններից՝ չակրաներից թեկուզ մեկի աշխատանքի խափանման դեպքում կհիվանդանա, ինչը կարտահայտվի ոչ միայն գուտ ֆիզիկական, այլև հոգևոր մակարդակում, քանի որ մարմինը գիտակցության կրողն է: Այսպիսով՝ մեկ նախադասությամբ ներկայացված փոխաբերության հաշվին ապահովված մատչելի ու պատկերավոր բացատրության միջոցով հողվածի հեղինակը թեկուզև ընդհանուր, տարրական, բայց ամբողջական պատկերացում է տալիս մարդու էներգետիկ կենտրոնների մասին:

A multilingual's languages are 'always on', equally available to access.

(D. Crystal “From the Word to the World – and Back Again” p. 2)

Տվյալ օրինակում հեղինակը, ցանկանալով բացատրել, որ բազմալեզվակրի տիրապետած բոլոր լեզուները գտնվում են հավասարապես ակտիվ կարգավիճակում, երբևէ դրանցից մեկը մյուսի կամ մյուսների ֆոնի վրա չի մղվում հետին պլան, օգտագործում է բավականին համառոտ ու կոնկրետ *always on* փոխաբերությունը՝ վերջինիս միջոցով լեզուները համեմատաբար «միացված», «աշխատող» սարքավորման հետ (նման համեմատության հնարավորություն տալիս է օտ նախորդի լեքսիկական իմաստը, որով վերջինս հանդես է գալիս մի շարք բայերի հետ զուգակցվելիս, ինչպես օրինակ՝ *turn on, switch on* և այլն):

And, in many parts of so-called monolingual Britain, a multilingual experience is available even without the technology, for it is there in the mouths and hands of the children attending the school. Leave your language outside? Not any more.

(D. Crystal “From the Word to the World – and Back Again” p. 5)

Այս օրինակում *in the mouths and hands of the children* փոխաբերության գործածության նպատակն է ընդգծել այն փաստը, որ բազմալեզվությունն այնքան խորն է նստած երեխաների մեջ (նրանց «բերաններում և ձեռքերում» է, այսինքն՝ մի քանի լեզվով խոսելն ու գրելը նրանց համար միանգամայն բնական երևույթ ու սովորություն է), որ ասես ֆիզիկապես նրանց անբաժան մասն է կազմում: Տվյալ դեպքում փոխաբերությունը թույլ է տալիս հեղինակին

ասույթի բովանդակության մեջ ներառել առանցքային իմաստային բաղադրիչ, որը հնարավոր չէր լինի նույնքան հակիրճ և դիպուկ կերպով արտահայտել առանց փոխաբերության:

Եթե վերոնշյալ անհատական-հեղինակային փոխաբերությունների բուն նպատակը խոսքի հասցեատիրոջ համար հնարավորինս մատչելի և դուրըմբռնելի կերպով զուտ գիտական հասկացություն ներկայացնելն է, ապա ներքոնշյալ փոխաբերության վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչպես է փոխաբերությունը, հանդես գալով որպես իմաստաբանական մակարդակում տեղեկատվության խտացման միջոց, թույլ տալիս խոսքը հասցեագրողին խուսափել խոսքին անձնական երանգ հաղորդելուց և հնարավորություն ընձեռում խոսքի հասցեատիրոջ նոտ համապատասխան միտքն առաջացնող պատկերների միջոցով ասելիքը ներկայացնել անողդակի՝ գիտական շարադրանքի օբյեկտիվությունն ու չեզոքությունը պահպանելով հանդերձ դրան հաղորդելով նաև որոշակի արտահայտչականություն: Այսպես՝

*... For my part, what I wanted us to do was just to look at terrorism as though it was a global brand, say, Coca-Cola. Both are fairly bad for your health. If you look at it as a brand in those ways, what you'll come to realize is, **it's a pretty flawed product**. As we've said, it's pretty bad for your health, it's bad for those who it affects, and it's not actually good if you're a suicide bomber either. **It doesn't actually do what it says on the tin**. You're not really going to get 72 virgins in heaven. It's not going to happen, I don't think. And you're not really going to, in the '80s, end capitalism by supporting one of these groups. It's a load of nonsense.*

(J. McCue “Terrorism Is a Failed Brand” p. 17)

Գաղափարական մակարդակում ահաբեկչության դեմ պայքարի նշանակությունը ցույց տալու նպատակով ելույթի հեղինակը դիմում է համաբանության վրա հիմնված փոխաբերության ստեղծմանը, մասնավորապես՝ ահաբեկիչներին համեմատում է շուկա հանված կոմերցիոն արտադրանքի հետ, նրանց դեմ պայքարը՝ շուկայում ապրանքի հետ մրցակցության հետ՝ առաջ քաշելով այն գաղափարը, որ ով մրցակիցներից ավելի խելացի մարքեթինգային քայլեր անի, նա էլ կգրավի շուկայի առաջատարի դիրքը: Մասնավորապես՝ մեջբերված տեքստային հատվածում հեղինակը ահաբեկչությունը համեմատում է համաշխարհային ապրանքանիշի՝ Կոկա Կոլայի հետ այն ընդհանրության հիման վրա, որ ինչպես Կոկա Կոլան, այնպես էլ ահաբեկչությունը վնասակար են առողջության համար: Հենց այս ընդհանուր հատկանիշի

վրա հիմնվելով էլ՝ հեղինակը համապատասխան փոխաբերությունների միջոցով պիտակավորում է ահաբեկչությունը որպես «թերություն, խոտան ունեցող ապրանք» (it's a pretty flawed product), որն իրականում չի կատարում այն «խոստումը», որ գրված է թիթեղյա շշի վրա (It doesn't actually do what it says on the tin): Նշված փոխաբերությունը հասկանալու, այսինքն՝ այն համապատասխան կերպով ահաբեկչության հետ կապելու, վերջինիս վերագրելու համար խոսքի հասցեատիրոջը կամ ելույթի ունկնդիրներին անհրաժեշտ է տիրապետել համապատասխան արտալեզվական գիտելիքի, այն է՝ տեղյակ լինել «Կոկա Կոլա» ընկերության՝ տարբեր ժամանակաշրջանների գովազդային լոգունգներին, որոնք պատկերված են լինում Կոլայի շշի վրա, այդ թվում՝ *Coca-Cola...Makes Good Things Taste Better (1956)*, *Things Go Better With Coke (1963)*, *It's the Real Thing (1969)*, *Coke Adds Life (1976)*, *Have a Coke and a Smile (1979)*, *America's Real Choice (1985)*, *Always Coca-Cola (1993)*, *Coca-Cola. Enjoy (2000)*, *Life Tastes Good (2001)*, *Coca-Cola...Real (2003)*, *Open Happiness (2009)* (<<http://www.coca-colacompany.com/stories/coke-lore-slogans>>): Այլ կերպ ասած՝ ինչպես Կոկա Կոլան է երջանկություն պարգևելու խոստումներ արտահայտող նման լոգունգներով իրականում քայքայում սպառողների առողջությունը, ճիշտ նույն կերպ էլ իսլամիստ ահաբեկիչների գաղափարախոսությունն է խլում ինչպես մահապարտների գործողությունների արդյունքում տուժող անմեղ զոհերի, այնպես էլ հենց մահապարտների կյանքը՝ վերջիններիս խոստանալով երկնային արքայություն և բազում հաճույքներ անդրշիրիմյան աշխարհում, եթե «խմեն այդ անմահական խմիչքը» կամ, որ նույնն է, «հանուն գաղափարի» ավիրածություններ կատարեն և հազարավոր մարդկանց, այդ թվում՝ իրենց սեփական կյանքը խլեն երկրային կյանքում, ինչն իհարկե ակնհայտ սուտ է (*You're not really going to get 72 virgins in heaven.*): Նշված փոխաբերությունները ցույց են տալիս, թե ինչպես է հեղինակը, արտալեզվական գիտելիքի վրա հիմնվելով, կարողանում ներակայել տեղեկատվությունը, որի նպատակը տվյալ դեպքում, բացի առանց այն էլ մեծածավալ տեղեկատվությամբ հագեցած տեքստը չձանրաբեռնելը և ելույթի համար հատկացված ժամանակում տեղավորվելը, ահաբեկչական գաղափարախոսությանն ուղղակիորեն, բացահայտ կերպով գնահատական տալուց խուսափելն է, ինչպես նաև մահապարտների՝ այդ գաղափարախոսության կողմից խաբված լինելու հանգամանքն ակնարկելը: Տվյալ դեպքում փոխաբերությունը թույլ է տալիս խոսողին խոսել նուրբ թեմայի մասին միաժամանակ խուսափելով հանրության առջև բացահայտ ու կտրուկ գնահատականներ տալուց, դրանով իսկ հնարավորինս մեղմացնելով ու նվազեցնելով սուբյեկտիվության աստիճանը գիտական խոսքում, որը, ինչպես գիտենք, համոզիչ լինելու համար պետք է փաստերը հնարավորինս օբյեկտիվ ներկայացնի:

Եզրակացություն

Այսպիսով՝ ներկայացված տեսական և գործնական նյութի վերլուծության արդյունքները թույլ են տալիս պնդել, որ.

1. Փոխաբերությունը հանդես է գալիս որպես իրականության ոչ կարծրատիպային ճանաչողության և վերարտադրման լեզվամտածողական մոդելի վրա հիմնված իմաստի խտացման մեխանիզմ, որը թույլ է տալիս, լեզվական միջոցների գործածությունը նվազագույնին հասցնելով հանդերձ, իրականության այս կամ այն դրվագը խոսքայնացնել հնարավորինս ամբողջական և ընդգրկուն պատկերի ստեղծմամբ,

2. Փոխաբերությունը, որպես իմաստային խտացման մեխանիզմ բնորոշ լինելով մարդկային մտածողությանն ընդհանրապես՝ հանդիպում է լեզվի գործածության յուրաքանչյուր ոլորտում, այդ թվում՝ գիտական խոսքում,

3. Անգլերեն գիտական խոսքում հանդես եկող անհատական-հեղինակային փոխաբերություններն իրականացնում են հետևյալ գործառույթները՝

- Նպաստում են գիտական ուսումնասիրության նյութն ավելի մատչելի ներկայացնելուն՝ գիտական երևույթները և հասկացությունները ոչ գիտական աշխարհի երևույթների հետ համեմատելու միջոցով,

- Թույլ են տալիս հաղորդվող տեղեկատվության որոշակի հատվածի ներակայման միջոցով խուսափել էթիկայի տեսանկյունից գգուշություն պահանջող նուրբ թեմաների մասին ուղիղ կերպով խոսելուց, հնարավորություն են ընձեռում խոսելու անուղակի կերպով՝ խոսքի հասցեատիրոջ մոտ համապատասխան միտք առաջացնող պատկերների միջոցով, ինչի արդյունքում մեղմանում է խոսքի առարկայի վերաբերյալ խոսքը հասցեագրողի դիրքորոշման սուբյեկտիվությունը: Սա համապատասխանում է գիտական շարադրանքի օբյեկտիվության պահպանման պահանջին,

- Խոսքին արտահայտչականություն հաղորդելով՝ կոտրում են գիտական շարադրանքի միապաղաղությունը, դրանով իսկ նպաստում են խոսքի հասցեատիրոջ մոտ մտածողական գործընթացի աշխուժացմանը, ինչպես նաև ուշադրության կենտրոնացմանը, ինչն ապահովում է խոսքի արագ ու արդյունավետ ընկալում՝ տնտեսելով թե՛ խոսքը հասցեագրողի, թե՛ խոսքի հասցեատիրոջ մտավոր ջանքերը, էներգիան և ժամանակը:

4. Իսկ բոլոր նշված գործառույթների հիմքում ընկած է փոխաբերության՝ որպես իմաստային մակարդակում տեղեկատվության խտացման մեխանիզմ հանդես գալու հանգամանքը: Այլ կերպ ասած՝ փոխաբերության յուրաքանչյուր գործառույթի իրականացմանը զուգահեռ մշտապես հանդես է գալիս փոխաբերության գոյաբանորեն պայմանավորված այս հիմնական՝ լեզվական տնտեսման գործառույթը: Ընդ որում, փոխաբերության գործառույթների նշված տարբերակումը զուտ պայմանական բնույթ է կրում, քանի որ իրական

հաղորդակցության մեջ դրանք հանդես են գալիս միաժամանակ՝ խոսքային իրադրությանը և հաղորդակցության նպատակներին համապատասխան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Arora, S.S. *The “Chakras” Science and Its Application to Coaching.* / Research Paper. Available at: <http://www.icoachacademy.com/blog/coaching_niche/executive_coaching/sandeep-singh-arora-the-chakras-science-and-its-application-to-coaching> [Accessed September 2015].
2. Cliff, H. (2015) *Have We Reached the End of Physics?* Geneva: TEDGlobal. Available at: <https://www.ted.com/talks/harry_cliff_have_we_reached_the_end_of_physics/transcript?language=en#t-712098> [Accessed December 2015].
3. Crystal, D. *From the Word to the World – and Back Again.* Available at <http://www.davidcrystal.com/David_Crystal/internet.htm> [Accessed December 2015].
4. Lakoff, G.; Johnson, M. (1980) *Metaphors We Live By.* Chicago: University of Chicago Press.
5. McCue, J. (2012) *Terrorism is a Failed Brand.* TEDGlobal. Available at <https://www.ted.com/talks/jason_mccue_terrorism_is_a_failed_brand/transcript?language=en> [Accessed June 2015].
6. Крюкова, Н.Ф. (2000) *Метафоризация и метафоричность как параметры рефлексивно-го действия при продукции и рецепции текста.* М..
7. Лакофф, Дж.; Джонсон, М., (1990) *Метафоры, которыми мы живем // Теория Метафоры.* / Переводы под ред. Н.Д. Арутюновой и М.А. Журиной. М.: Прогресс.
8. Мишанкина, Н.А. (2010) *Лингвокогнитивное моделирование научного дискурса.* Томск.
9. Суровцев, В.А.; Сыров, В.Н. (1999) *Языковая игра и роль метафоры в научном познании.* // Философия науки. N 1 (5).
10. Ченки, А. (1996) *Современные когнитивные подходы к семантике: сходства и различия в теориях и целях.* // Вопросы языкознания. N 2.

Metaphor as a Means of Linguistic Economy at the Semantic Level

Metaphor as a linguo-cognitive mental mechanism representing one object of reality through another based on a common feature or a subjectively attributed characteristic, possesses the potential of compressing information within its structure at the semantic level. It is partially by this fact that its widespread use in scientific discourse in the capacity of a means of linguistic economy is to be accounted for. Parallel to this basic function, metaphor performs several other functions in line with the pragmatic goals of a specific communicative act.

Метафора как средство реализации принципа языковой экономии на семантическом уровне

Метафора, будучи лингвокогнитивной моделью мышления, которая способствует представлению того или иного объекта реальности через другой объект на основе объединяющего признака или субъективно приписанного качества, обладает потенциалом сжатия информации на семантическом уровне в рамках своей структуры. Этим отчасти обусловлено ее широкое употребление в научном дискурсе в качестве средства реализации принципа языковой экономии. Помимо данной базовой функции, метафора служит осуществлению ряда других функций в соответствии с прагматическими целями конкретного коммуникативного акта.